ՀՏԴ 327

Պատմություն

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող , պ.գ.թ.
E-mail: teachersunionshirak@gmail.com

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1918-1921ԹԹ.

Սույն հոդվածում քննվում է 1918-1920 թվականներին թուրք-հայկական պատերազմների ընթացքում մշակված և հաջողությամբ կիրառված խաղաղության օրակարգով պատերազմելու թուրքական ռազմավարությունը:
Թուրքական դիվանագիտական զինանոցում իր ուրույն տեղը զբաղեցրած այս ռազմավարությունը, ապահովելով 1918-1921 թվականներին թուրքերի դիվանագիտական ու ռազմական հաղթանակները, հաջողությամբ գործարկվում է նաև այսօր հայ ժողովրդի և հայոց պետականության դեմ:
«Խաղաղության օրակարգով պատերազմելու ռազմավարությունը, որ թուրքերը կիրառել են սովորաբար պատերազմական հանցագործություններից հետո, ոչ միայն հնարավորություն է ընձեռել նրանց խուսափել պատասխանատվությունից, այլ բանակցություններին զուգահեռ շարունակելով պատերազմը՝ նոր տարածքներ զավթել, նորանոր մարդկային և նյութական կորուստներ պատճառել հայերին:
Ելնելով վերոհիշյալից մեր առջև նպատակ ենք դրել բացահայտել վերը նշված ռազմավարության էությունը, թուրքական խաղաղության օրակարգի և հայոց ցեղասպանության անտեսանելի կապը, հիմնավորել

թուրքական խաղաղությունից պաշտպանվելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր՝ *խաղաղության օրակարգի ռազմավարություն, թուրքական դիվանագիտություն, պատերազմական հանցագործություն, ցեղասպանություն, բանակցություն, դիվանագիտական խարդավանքներ, թուրք-հայկական պատերազմ:*

К.Алексанян

ТУРЕЦКАЯ СТРАТЕГИЯ МИРНОЙ ПОВЕСТКИ В ПЕРИОД 1918-1921ГГ.

Послевоенные события происшедшие в Армении, еще раз свидительствуют о тм, что Турция с удивительной точностью повторяет кровавую реальность 100 летной даяности и использует свой необыкнованный арсенал дипломатических средств и методов для достижения целей в мировом обществе. Исходя из вышесказанного , мы считаем целью нашего иследования: выявить и обосновать те методы и средства турецкой дипломатии, с помощью которых она обеспечивает себе бесспорное преимущество в деле мирного урегулирования военных конфликтов и неоспоримый успех в стратегии “мирной повестки”.

В статье мы попитались раскрит ведущую роль“мирной повестки” Турцией в деле урегулирования военного конфликта и достижения успеха в переоговорах на выще указаных дипломатических переговорах, одновременно ведя захватическую и кровополитную войну .

Следует особой отметить , что в даже момент подписания договоров о прекращении огня, они не соблюдали данный акт подписания на госудрсвенном уровне и нарушали соглосованность.

Создовалось впечатление, что подписанные соглащения и не имеют никокого значение и не мешают Турции вести открытую войну, нарушая все договорности.

Важно указать, что Турция и сейчас, применяет, стратегию “мирной повестки” на разных уровнях дипломатических перегаворов и с Россией и с Армениий.

Следовательно перед нами стоит важнейшая задача: показать невидимое связи между Геноцидам армянского народа и ложной турецкой стратегии “мирной повестки”, обосновать необходимость защиты от ее дальнейших погубных последствии.

Ключевые слова: *стратегия “мирной повестки”, турецкая дипломатия, военное преступление, геноцид, петеговоры,дипломатические махинации, турецко-армянская война.*

K. Aleksanyan

TURKISH STRATEGY OF WAR ON THE PEACE AGENDA 1918-1921

The 100-year history of the Armenians, repeating itself almost identically, posing new challenges to all Armenians, testifies that it has not yet received serious scientific research.

We are talking, in particular, about studies of Armenian-Turkish relations and strategies developed and used in the Turkish diplomatic arsenal.

Our goal is to reveal in this article the essence of the strategy of waging war on the "peace agenda", which has taken its special place in the Turkish diplomatic arsenal, ensuring the military and diplomatic successes of the Turks.

The "peace agenda", which the Turks usually put forward after war crimes, gave them the opportunity not only to avoid responsibility, but also, by negotiating, to continue the war. 1918-1921 the strategy of the "peace agenda", developed and successfully launched by Turkish diplomacy during the Turkish-Armenian wars, ensured diplomatic and military victories of the Turks. In particular, having violated the resistance of the Armenians with the propaganda of peace and dulled their vigilance, the Turks continued to implement the policy of seizing Armenian territories and the Armenian Genocide.

An important source for revealing the essence of the strategy of war with the peace agenda are the years 1918-1921. studies of wars and treaties accompanied by war crimes carried out by the Turks. We are talking, in particular, about the Brest-Litovsk, Batumi, Alexandropol, Moscow and Kars treaties, in previous negotiations on the conclusion of which the above strategy was developed and applied.

We tried in 1918-1921 having studied the peace negotiations and the agreements concluded during the Turkish-Armenian wars, we have identified the role of the strategy of the peace

agenda in the Turkish diplomatic and military successes in the negotiation process for a peaceful settlement in Brest Litovsk, Batumi, Alexandropol, Moscow and Kars and in the relevant concluded agreements.

By the way, the strategy of war with the peace agenda is successfully operating against the Armenian statehood and people today. Therefore, we have set ourselves the task of showing the invisible links between the "era of peace" and the Armenian Genocide and substantiating the need to protect against the Turkish world.

Key words: *peace agenda strategy, Turkish diplomacy,genocide, negotiations, diplomatic machinations, Tuskish- Armenian war.*

Հայոց վերջին՝ գրեթե նույնությամբ կրկնվող 100 տարվա պատմությունը, նոր մարտահրավերների առաջ կանգնեցնելով համայն հայությանը, վկայում է, որ այն դեռ լուրջ գիտական ուսումնասիրությունների և հանրայնացման կարիք ունի: Խոսքը վերաբերում է մասնավորապես հայ-թուրքական հարաբերություններին և թուրքական դիվանագիտական զինանոցում մշակված ու գործարկված ռազմավարությունների ուսումնասիրություններին:

Թուրքական դիվանագիտական զինանոցում իր ուրույն տեղը զբաղեցրած, 1918-1920թթ. թուրք-հայկական պատերազմների ընթացքում մշակված և հաջողությամբ գործարկված «խաղաղության օրակարգով» պատերազմելու, խաղաղություն պարտադրելու ռազմավարությունը ապահովել է թուրքերի դիվանագիտական և ռազմական հաղթանակները: Վերոհիշյալ ռազմավարությունը,որ թուրքերը գործարկել են սովորաբար պատերազմական հանցագործություններից հետո, նրանց ոչ միայն հնարավորություն է ընձեռել խուսափել պատասխանատվությունից, այլ բանակցություններին զուգահեռ շարունակելով պատերազմը՝ նոր տարածքներ զավթել, նորանոր մարդկային և նյութական կորուստներ պատճառել հայերին:

Ի դեպ այն այսօր էլ հաջողությամբ իրականացվում է հայոց պետականության և ժողովրդի դեմ: Հետևաբար մեր առջև նպատակ ենք դրել բացահայտել վերը նշված ռազմավարության էությունը, թուրքական խաղաղության օրակարգի և հայոց ցեղասպանության անտեսանելի կապը, հիմնավորել թուրքական խաղաղությունից պաշտպանվելու անհրաժեշտությունը:

Խաղաղության օրակարգով պատերազմելու թուրքական ռազմավարության էության բացահայտման համար կարևոր աղբյուր են հանդիսացել 1918-1920թթ. թուրքերի հանցագործություններով ուղեկցվող պատերազմների և կնքած պայմանագրերի ուսումնասիրությունները: Խոսքը վերաբերում է մասնավորապես Բրեստ-Լիտովսկի, Բաթումի, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերին, որոնց կնքման նախորդող բանակցություններում մշակվել և կիրառվել է վերոհիշյալ ռազմավարությունը:

Թուրքիան թե՛ Խորհրդային Ռուսաստանի, թե՛ Անդրկովկասի Դաշնային Հանրապետության և թե՝ Հայաստանի Հանրապետության հետ բանակցություններ վարելիս՝ ներկայանալով որպես «խաղաղության և եղբայրության ջատագով», միաժամանակ շարունակել է ռազմական գործողությունները, հայ բնակչության կոտորածներն ու հայկական տարածքների զավթումը: Սակայն ոչ՛ նոր տարածքների զավթումը, և ոչ՛ էլ շարունակվող կոտորածները նրանց չէին խանգարում բանակցությունների ընթացքում հանդես գալ խաղաղության հաստատողի, եղբայրության և արդարության վերականգնողի դերերով: Ընդ որում նույնիսկ այդպիսի բանակցությունների արդյունքում կնքված պայմանագրերը չէին իրականացվում, դրանց խախտումները սովորական երևույթ էին: Դրանք կնքվում էին միայն նրա համար, որպեսզի թուլացնեին հակառակորդի զգոնությունը, կռվելու կամքը, դիմադրական կորովը՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով արևելահայոց ցեղասպանության համար: Մասնավորապես, 1918-1920թթ. թուրքական դիվանագիտության կողմից մշակված և գործարկված խաղաղության օրակարգն ավարտվեց արևելահայության ցեղասպանությամբ և հայկական տարածքների զավթմամբ:

Դեռևս 1915թ. վերջին Բարձր Դռան և մի քանի կովկասցի մուսուլմանների կողմից Ստամբուլում առաջ էր քաշվել Թուրքիայի հովանավորությամբ իբր անկախ, քաղաքականապես միավորված, առանց ազգային և դավանական խտրականության Կովկասի ստեղծման գաղափարը:[1] Իսկ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելու կապակցությամբ երիտթուրքերի կուսակցության գլխավոր վարչությունը հայտարարել էր. «Թուրքիան իր ազգային ծրագիրը մշտնջենապես ապահովելու համար պետք է սահմանները տարածի մինչև Կովկասյան լեռնաշղթան և տիրի

[1] ***Ավետիսյան Հ.,*** *Հայկական հարցը 1918թ., Երևան, 1997, էջ 9, Äîêóìåíòû è ìàòåðèàëû ïî âíåø íåé ïîëèòèêå Çàêàâêàçüÿ è Ãðóçèè. Òèôëèñü, 1919, ñ. 10-11.*

Դերբենդի անցքին: Առանց այդ սահմանների Թուրքիան միշտ ենթակա կլինի Մոսկովյան ոտնձգություններին»:[1]

Թուրքական այս ծրագրերի իրականացման համար նպաստավոր պայմաններ են ստեղծվում Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, երբ ռուսական զորքերի կազմալուծման արդյունքում ռուս-թուրքական կովկասյան ճակատը բաց է մնում թուրքերի առաջ: Վերջիններս 1918թ. փետրվարին հայտարարելով, որ կշարունակեն ռազմական գործողությունները մինչև ռուսական զորքերին հանդիպելը, անարգել շարժվում են առաջ:[2] Նորաստեղծ անդրկովկասյան իշխանությունները չեն կարողանում կազմակերպել երկրի պաշտպանությունը թուրքական հարձակումներից, առավել ևս՝ թուրքական դիվանագիտական խաղերից: Գրավելով Արևմտյան Հայաստանը՝ թուրքերը միաժամանակ հաշտության բանակցությունների առաջարկներով թուլացնում են Անդրկովկասի ժողովուրդների դիմադրական կորովը, երկպառակություն գցում նրանց միջև: Մինչ Անդրկովկասին Խորհրդային Ռուսաստանից անկախ ինքնուրույն պետության դերին պատրաստելը թուրք «խաղաղաղարները» Բրեստ- Լիտովսկի բանակցություններում, հակառակ առանց անեքսիաների և ռազմատուգանքների հաշտություն կնքելու լենինյան դրույթներով առաջնորդվող Խորհրդային Ռուսաստանի, առաջ են քաշում որպես ռազմական ծախսերի փոխհատուցման վճար Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերի վերադարձի, կովկասյան ինքնուրույն պետության ճանաչման, իրենց ներքին գործերի մեջ խառնվելուց հրաժարվելու պահանջները:

1918թ. մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որով Կարսն Արդահանն ու Բաթումը հանձնվում էին թուրքերին, հայ քաղաքական շրջանակներում բուռն քննարկումների տեղիք է տալիս: 1918թ. ապրլի 6-8-ին /19-21/-ը Անդրկովկասի Սեյմի և կառավարության հայ անդամների, Ազգային խորհրդի, կուսակցությունների ներկայացուցիչների, Երևանի և Կարսի նահանգական կոմիտեների և Հայոց ազգային խորհուրդի, Երևանի, Կարսի ու Ալեքսանդրապոլի լիազորների Ալեքսանդրապոլում կայացած խորհրդակցության ժամանակ, որտեղ քննության է առնվում հաշտության խնդիրը, Խ.Կարճիկյանը դեմ լինելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունմանը և Կարսը հանձնելու գնով պատերազմի դադարեցմանը, իրավացիորեն նշում էր, որ ամեն պարագայում մենք պետք է շարունակենք կռիվը և երբեք չպետք է կամովին տանք մեր դիրքերն ու ամրությունները, եթե անգամ այդ կռիվը լինի միանգամայն անհույս և հետևանքը պարզ, այնուամենայնիվ մենք չպետք է գիտակցաբար զենքը վայր

---

[1] ***Ավետիսյան Հ,*** *Հայկական հարցը 1918թ., Երևան, 1997, էջ 9:*

[2] ***Ավետիսյան Հ,*** *նշված աշխ., էջ 81:*

դնենք: Պատերազմը դադարեցնելը մեզ համար ինքնասպանության նշանակություն ունի: Իսկ մեր անվերջ տատանումները և հասարակական զանազան խմբակցությունների ու օրգանների ագիտացիան հօգուտ Բրեստի դաշնագրի, մեծապես թուլացնում է մեր դիմադրական ուժը, անվստահություն ներշնչում մեր կռվողներին և կազմալուծում առաջ բերում թիկունքում: Վճռականապես պետք է որոշել ու ցուցադրել, որ կռիվը շարունակվելու է և որ անհույս մի կռիվ չէ, որը անվիճելի կերպով տանում է մեզ դեպի կորուստ: «Պատմական ամենախոշոր և ճակատագրական սխալը կատարած պետք է լինենք, եթե հիմա ընդունենք Բրեստի դաշնագիրն ու այդպիսով դադարեցնենք պատերազմը,-պնդում էր Կարճիկյանը,-: Նախ և առաջ այդ մեզ չի ազատելու ու ապահովելու Տաճկաստանի առաջխաղացումից ու Անդրկովկասի լիովին գրավումից: Հակառակ այն բոլոր հավաստիացումներին, որ արել են տաճիկները, Կովկասի գրավումը հանդիսանում է մի քաղաքական ծրագիր և անհրաժեշտություն Տաճկաստանի համար: Բաթումի և Կարսի գրավումը առաջին էտապն է, դյուրացնելով այդ:Ինձ թվում է, որ այն րոպեին, երբ հայտարարվեց, որ խաղաղությունը կնքված է, որ սահմանները որոշված են, տիրելու է սոսկալի հոգեկան ռեակցիա, որը կհաջորդի չորս տարվա հոգնածությանը: Ոչ միայն կչքանա ոգևորությունը, կռվելու ու պաշտպանվելու ձգտումը, որը նկատվում է այժմ և ձեռք է բերված երկար փորձություններից հետո, այլև ամբողջ բանակը կհալվի ու ոչ մի զինվոր չի մնա զենքի տակ: Կասկածից դուրս է, որ դաշնագիրը ընդունելու օրից փաստորեն զինաթափ են լինելու ու լուծվելու են մեր զինվորական ուժերը և բացելու ենք բոլոր դռները Տաճկաստանի առաջ»:[1] Այս կարծիքին էր նաև Անդրանիկը, որը Հայաստանի ապահովության խորհրդի նախագահ Պ. Լևոնյանից ստանալով Նազարբեկյանի կորպուսի կազմում հայկական զորամասեր ստեղծելու առաջարկը, անմիջապես Թիֆլիսից գալով Ալեքսանդրապոլ, ձեռնամուխ է լինում արևմտահայերից բաղկացած Հայկական առանձին հարվածող ջոկատի ստեղծմանը:[2]

Ինչ վերաբերում է հայ քաղաքական գործիչների մեծամասնությանը, ապա նրանք չգիտես ինչու վստահ էին և հույս ունեին, թե թուրքերը սահմանը չեն անցնի, իսկ եթե անցնեն էլ, իրենք երկիրը անպայման կարող են պաշտպանել: Մասնավորապես, անդրկովկասյան կառավարության պատվիրակության հայ ներկայացուցիչներ Ա. Խատիսյանը և Հ.

---

[1] *Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ), Փաստերի և նյութերի ժողովածու, խմբ.* ***Ա. Վիրաբյան****, Եր. 2014, էջ 324-325:ՀԱԱ, ֆ. 222,, գ.1, գ.122, թ.1-4:*

[2] ***Քաջունի Եղիշե****, Զօրավար Անդանիկ, Հայկական առանձին հարուածող զօրամասը, Եր.,Հայկական ուսումնասիրությունների Անի հիմնադրամ, 2015, էջ 19:*

Քաջազնունին, Տրապիզոնի բանակցություններում թուրքերի խոստումերին հավատալով, Ալեքսանդրապոլի արտակարգ խորհրդակցության ժամանակ փորձում էին համոզել քաղաքական կուսակցություններին և ժողովրդական մասսաներին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունման անհրաժեշտությունը՝ այն համարելով չարիքներից փոքրագույնը:[1]

Մինչ հայ քաղաքական կուսակցություններն ու ազգային հասարակական կազմակերպություններն ապրիլի 6-8-ը Ալեքսանդրապոլում տեղի ունեցած խորհրդակցությունում քննարկում էին Անդրկովկասի պաշտպանության հարցերը, Թուրքիայի հետ հաշտության պայմանները և ճշտում իրենց վերաբերմունքը պատերազմի և խաղաղության նկատմամբ, Թիֆլիսում Անդրկովկասյան Սեյմը հրավիրում է արտահերթ նիստ, Անդրկովկասը հռչակում անկախ, ընդունում Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և պատվիրակություն կազմում նոր բանակցությունների համար:[2] Չնայած հայ քաղաքական ու ռազմական գործիչների դիմադրությանը և բողոքներին, Անդրկովկասի Դաշնակցային Ռամկավարական Հանրապետության կառավարությունը Չխենկելու գլխավորությամբ ընդունում է թուրքական հրամանատարության բոլոր պայմանները, համաձայնում պարպել Կարսի մարզը, զորքերը հետ քաշել մինչև Արփաչայ գետը, ոչնչացնել գետի աջ ափին գտնվող Ալեքսանդրապոլի ամրությունները: Ապրիլի 10-ին հրամայվում է Կովկասյան ճակատի զորքերին դադարեցնել ռազմական գործողությունները, իսկ ապրիլի 11/24/-ին Անդրկովկասյան կառավարության ռազմական նախարարի պաշտոնակատար Օդիշելիձեն հրամայում է Նազարբեկյանին՝ թողնել Կարսը:[3] Ապրիլի 12-ին չնայած Հայկական կորպուսի և ժողովրդի թշնամուն դիմադրելու հնարավորություններին և ցանկությանը,Կարսն առանց կռվի հանձնվում է թուրքերին:[4] Թուրքական դիվանագիտական խարդավանքների արդյունքում անդրկովկասյան իշխանությունների կողմից Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունումը և Կարսն առանց կռվի թուրքերին հանձնելը հայ զինվորների և սպաների մեջ ահավոր հուսալքում է առաջացնում և բարոյալքում նրանց: Հայ քաղաքական գործիչները ստիպված են լինում հետևություններ անել: Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունումից և Կարսի հանձնումից հետո հույս ունենալով, որ Բաթումում բանակցությունները կշարունակվեն Տրապիզոնի սկզբունքներով, հայոց

---

[1] *Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ), Փաստերի և նյութերի ժողովածու, խմբ.* ***Վիրաբյան Ա.,*** *Եր. 2004, էջ 312-317:*

[2] *Ավետիսյան Հ, Հայկական հարցը 1918թ, Եր 1997, էջ 155:*

[3] *ՀԱԱ, ֆ,121, ց.1, գ.49, թ.24-35:*

[4] *ՀԱԱ, ֆ,121, ց.1, գ.49, թ.34-35:*

պատվիրակության ներկայացուցիչներ Հ. Քաջազնունին և Ա.Խատիսյանը, մայիսի 13-ին հանկարծակի են գալիս թուրքերի նոր ծանր պահանջներից և իրենց համար տխուր եզրակացություն անում.«...Դուրս է գալիս, որ մենք եղել ենք խաբված և ինքներս ակամա խաբել ենք մեր ժողովրդին, հավաստելով, որ թուրքերը իրենց պահանջներում Բրեստից այս կողմ չեն անցնի»:[1] Մայիսի 13-ին թուրքերի հետ մասնավոր հանդիպման ժամանակ Խատիսյանն ընդգծում է, որ պահանջվող տարածքի զիջումը թուրքերին միանգամայն անընդունելի է, թե՛ Անդրկովկասի և թե՛ հայերի տեսանկյունից՝ հատկապես: Սակայն թուրքերը, շարունակելով դիվանագիտական խաղերը, հանդես գալով խաղաղության կողմնակից, մեղադրում են Անդրկովկասի իշխանություններին Տրապիզոնում պայմանագիր չկնքելու և պատերազմը շարունակելու համար, որի պատճառով էլ իբր իրենք ստիպված են եղել խախտել Բրեստի պայմանագիրը: Սպառնալիքները, որոնք թվում են, թե խաղաղության օրակարգի հետ կապ չպետք է ունենան, իրականում խաղաղության օրակարգով պատերազմելու ռազմավարության կարևոր մասն են կազմում: Երևանի նահանգի պատկառելի մասի նկատմամբ Բաթումի բանակցություններում թուրքական պահանջների շարժառիթներում գլխավոր պատճառը օսմանյան նախարարը համարում է Կովկասից եկող լուրերը՝ Բաքվում և Երևանի նահանգում մուսուլմանների նկատմամբ հայերի բռնության վերաբերյալ, որն իբր սաստիկ զայրացրել է Թուրքիայի հասարակությանը: Այնուհետև շարունակելով դիվանագիտական ճնշումը թուրքական պատվիրակության ղեկավար Հալիլը դնում է երկու պահանջ: Նախ՝ հայերը Կովկասում պետք է դադարեցնեն մուսուլմանների դեմ բռնությունները և «ապացուցեն որ խելոքացել են», և երկրորդ՝ հնարավորություն տան թուրքերին շուտափույթ օգտագործել երկաթուղին՝ զորքերը Պարսկաստան տեղափոխելու և Թավրիզը հնարավորին չափ շուտ անգլիացիներից գրավելու համար: Իսկ երբ հայ պատվիրակները դնում են նախ՝ Բրեստ-Լիտովսկի պայմանների ճանաչումը և սահմանների հարցի լուծումը, ապա Ալեքսանդրապոլ- Ջուլֆա երկաթգծով անցնելու թույլտվություն տալու հարցը, Հալիլը ձեռնամուխ է լինում թուրքական դիվանագիտական հերթական միջոցին՝ սպառնալիքին: Նա հայտարարում է, որ վախենում է, որ եթե ինքը Բրեստ-Լիտովսկի ճանաչման հարցով դիմի Կ.Պոլսին, ապա նրանք կպահանջեն իրենից վերջնագրի ձևով և տարածքները զիջեն և թույլտվություն տան անցնելու:[2] Անգլիական առաջ շարժվող զորքին դիմակայելու կարճ ճանապարհը

---

[1] ***Ավետիսյան Հ***, *նշվ.աշխատությունը, էջ 195:*

[2] *Խաչատրյան Ա., Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, կազմ.* ***Վ. Ղազախեցյան***, *Եր. 2010, էջ 159:*

Ալեքսանդրապոլ-Ջուլֆա-Թավրիզ երկաթուղին է և ինքն ունի Էնվեր փաշայի հրամանը՝ շտապ գրավել այդ գիծը: Նկատելով, որ հայերի շահերը ես պահանջում են թուրքական զորքերի տեղափոխումը Պարսկաստան, քանզի այդ դեպքում հայերը կխուսափեին նոր արյունահեղությունից և ավերածություններից, Վեհիբը զգուշացնում է, որ հայերի մեժումը կբարդացնի և կդժվարացնի իր առաջադրանքը, սակայն չի կանգնեցնի նրա լուծումը, քանզի եթե հայերը չհամաձայնեն բարի կամքով թույլ տալ անցնելու, ինքը կանցնի ուժով՝ «հանդիսավոր քայլքով»:[1]

Տեսնելով թուրքական ծրագրերում հայ ժողովրդի քաղաքական և ֆիզիկական ոչնչացման նպատակները, Քաջազնունին արտահատելով հայ պատվիրակության տեսակետը հրաժարվում է որևէ համաձայնությունից, առաջարկելով նախ որոշել սահմանների մասին հարցը, որի լուծումից կախված են մնացած հարցերը[2]: Մայիսի 14-ին Չիխենկելին Գերմանիայի ներկայացուցիչ ֆոն Լոսովի հետ համաձայնության է գալիս, որ կթույլատրվի թուրքական զորքերի անցումը, եթե Գերմանիան երաշխավորի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Սակայն դիվանագիտական և ռազմական հաղթանակն ապահոված Թուրքիայի համար արդեն կարևոր չէր ոչ Անդրկովկասի իշխանության, ոչ նույնիսկ իրենց դաշնակից Գերմանիայի, և առավել ևս՝ հայերի կարծիքը: Թուրքական հրամանատարության ծանուցումն Անդրկովկասյան հանրապետության տարածքով օսմանյան զորքի անցման և Ալեքսանդրապոլի դատարկման մասին անդրկովկասյան պատվիրակությունը ստանում է միայն մայիս 15-ի առավոտյան, երբ թուրքերը վերջնագիր էին ներկայացրել Ալեքսանդրապոլի կայազորին: Թուրքական հրամանատարությունը նման «վերջնագիր» է ներկայացնում նաև Ալեքսանդրապոլի զորքերի հրամանատարությանը:[3]

Թուրք դիվանագիտությունը մինչև Ալեքսանդրապոլի գրավումը ջանք չէր խնայել մեկուսացնելու Անդրանիկին:[4] Իրենց հնարավոր առաջխաղացումը պայմանավորելով մուսուլմանների նկատմամբ իբր թե կատարվող բռնություններով, հայ քաղաքական ուժերին հավաստիացրել էին, թե խաղաղությունը կպահպանվի, եթե հայկական ուժերը առիթ չտան պատերազմի: Եվ ինչքան էլ Անդրանիկը փորձում էր հակառակվել այդ խաղաղասեր ուժերին, պնդելով որ թուրքերի նպատակը հայերին ոչնչացնելն է և նրանք ամեն դեպքում կշարունակեն առաջխաղացումը, հայոց քաղաքական կյանքը տնօրինողները շարունակում էին մնալ իրենց

---

[1] ***Ավետիսյան Հ***, *Հայկական հարցը 1918թ, Եր. 1997, էջ 197:*

[2] *Նույն տեղում:*

[3] *ՀԱԱ, ֆ. 370, ց.1, գ. 5 , թ. 7:*

[4] *ՀԱԱ, ֆ. 370, ց1, գ. 1,թ.14:*

կարծիքին: Անդրանիկի հայկական առանձին հարվածող ջոկատը չի կարող մասնակցել Ալեքսանդրապոլի համար կռիվներին, քանի որ թեև այնստեղծվել էր Ալեքսանդրապոլում, սակայն Նազարբեկյանի ապրիլ 13-ի հրամանով պաշտպանելու էր Ալեքսանդրապոլ-Ախալքալաքի հաղորդակցությունը և հսկողություն էր սահմանելու Կարսի մարզի վրա:[1] Ակնհայտ էր, որ Ալեքսանդրապոլից-Ախալքալաք ձգվող տարածությունը պահպանելը կջլատեր զորամասը և նրա համար հեշտ չէր լինի գործել որպես միասնական հարվածող ուժ:[2] Բնական է, որ Անդրանիկը պետք է դժգոհեր ուժերի այս տեղաբաշխումից՝ նպատակահարմար չգտնելով իր զորամասը նշված տեղամասում փոշիացնել: Մայիսի 8-ին Հայաստանի ապահովության խորհրդի նախագահ Վահան Փափազյանը Հայկական առանձին հարվածող զորամասի հրամանատար գեներալ Անդրանիկին ուղղված պաշտոնական գրության մեջ, պատասխանելով վերջինիս նամակին, զորամասի ուժերի տեղաբաշխումը պատճառաբանում էր այն հանգամանքով, որ կովկասյան կառավարությունն ամեն զոհողություններով ջանում է որևէ առիթ չտալ, որ թուրքական բանակը սահմանն անցնի: «Կը գտնենք,- նշված էր այդ գրության մեջ,- որ գլխավորապէս թուրքահայ զօրամասերի և Ձեր ներկայութիւնը այնտէղ վերոյիշեալ տեսակէտից կարող է յարմար առիթ համարուել թուրքական բանակի կողմից և անցանկալի արդիւնք ունենալ թէ՛ զինադադարի հարգման և թէ՝ մանավանդ թուրքահայերի շահերի տեսակէտից»:[3] Հայոց ազգային խորհրդի և Հայաստանի ապահովության խորհրդի ջանքերով Նազարբեկյանը, որի հրամանատարության տակ էր գործում Անդրանիկի զորամասը, գիտակցաբար հեռու էր պահում Անդրանիկին թուրքերի հետ բախվելու հնարավոր վայրերից: Այս զգուշավոր քաղաքականության տրամաբանությունն այն էր, որ առիթ չտային թուրքերին խախտելու զինադադարը: Այս համոզմունքով էլ Ապահովության խորհուրդը Նազարբեկյանին առաջարկում է հեռացնել Անդրանիկին էլ ավելի անվթար մի վայր. «Մեր պարտքն ենք համարում հաստատել,- նշված էր Նազարբեկյանին ուղղված գրության մեջ,- որ Հայաստանի ապահովության խորհուրդը մեր ժողովրդին պատերազմի կործանարար հետևանքներից զերծ պահելու համար հանդիսանում է զինադադարի պայմանների պահպանման համոզված կողմնակից: Ելնելով վերոհիշյալից Խորհուրդը խնդրում է Ձեզ առանձնահատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, թե որքանով է հարմար, որ ներկայումս զինադադարի ամենապատասխանատու և վտանգավոր հետևանքներով հղի ժամանակին,

---

[1] *ՀԱԱ, ֆ. 370, ց1, գ. 1,թ.14:*

[2] ***Կարապետյան Հ.,*** *, Անդրանիկ, հ.3, Եր,1994, էջ 505:*

[3] *ՀԱԱ, ֆ.370, ց.1, գ.5, թ.4:*

թուրքական զորամասերի դեմ դուրս բերվեն թուրքահայերը և մասնավորապես մի այնպիսի չափազանց հեղինակավոր և վառ զորահրամանատար, որպիսին գեներալ Անդրանիկն է: Մենք այն կարծիքին ենք, որ գեներալ Անդրանիկի միայն ներկայությունը այնպիսի շրջաններում, ինչպիսին այժմ նրա գտնվելու վայրն է, հանգամանքների բերումով կարող է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնցում գեներալը հարկադրված կլինի շեղվելու Ձեր ցանկություններից, նույնիսկ իր սեփական ցանկությունից անկախ»:[1] Նշված գրության մեջ պահանջ էր դրվում Նազարբեկյանի առաջ միջոցներ ձեռք առնել, որպեսզի «առաջիկայում, մինչև ակտիվ մարտական գործողությունների հնարավոր անհրաժեշտությունը, Անդրանիկի զորամասը փոխարինելու ճակատում գտնվող ուրիշ զորամասով, նրան ետ քաշելով մի ավելի նպատակահարմար վայր»:[2] Ակնհայտ է, որ Անդրանիկը չէր կարող մասնակցել Ալեքսանդրապոլի պաշտպանությանը, քանի որ տեղյակ չէր թուրքական հարձակման մասին: 1918թ. մայիսի 15-ին միայն Նազարբեկյանը, տեղեկացնելով Անդրանիկին թուրքերի ուխտադրուժ հարձակման, Ալեքսանդրապոլից 25 վերստ հեռանալու և Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին իրենց տրամադրության տակ դնելու վերջնագրի մասին, առաջարկում է անցնել հարձակվող թշնամու թիկունքը և գործել իրադրությանը համապատասխան՝ օգնելով Ալեքսանդրապոլի ջոկատին:[3] Իսկ մինչ այդ Անդրանիկը, հանկարծակի հայտնվելով թուրքական զորքի դեմ հանդիման երեք օր կատաղի կռվի արդյունքում չեզոքացնում է թուրքերի կողմից պաշարման վտանգը: Ալեքսանդրապոլի հանձնվելուց հետո Անդրանիկը գրեթե բոլոր կողմերից շրջապատված լինելով թուրքերով, ընկնում է անելանելի վիճակի մեջ: Կորպուսի մյուս զորամասերի հետ կապ հաստատելու միակ ելքը տեսնելով դեպի երկաթգիծը շարժվելու մեջ, խուճապի մատնված գաղթականության հետ միասին շարժվում է դեպի Ջալալ-օղլի: Երկու օրվա կատաղի կռիվներից հետո Անդրանիկը շարժվում է դեպի Դիլիջան: Այստեղ, իմանալով Բաթումի պայմանագրի կնքման մասին, հեռանում է Հայաստանի Հանրապետության սահմաններից:[4]

Ալեքսանդրապոլի անկման պատճառը հայ հասարակական և քաղաքական ուժերի՝ թուրքական խաղաղության օրակարգին տուրք տվող զգուշավոր քաղաքականությունն էր և, միաժամանակ, թուրքական դիվանագիտության փայլուն հաղթանակը: Վերջիններս, Տրապիզոնի

---

[1] *ՀԱԱ, ֆ. 370, ց.1, գ.5, թ. 2:*

[2] *ՀԱԱ, ֆ.370, ց.1, գ.5, թ.4:*

[3] *ՀԱԱ, ֆ.370, ց.1,գ.1, թ. 26:*

[4] ***Ալեքսանյան Կ****, Միհրան Խաչատրյանի հուշերը զորավար Անդրանիկի հայկական առանձին հարվածող զորամասի գործունեության մասին, Հայկազյան հայագիտական հանդես, Բեյրութ, 2016, էջ 533:*

բանակցությունների ժամանակ անընդհատ շեշտելով մուսուլման բնակչության նկատմամբ իբր կատարվող բռնությունների մասին, ստիպում են հայ քաղաքական գործիչներին մեկուսացնել ռազմական գործողությունների պատրաստ և ունակ ուժերին, մասնավորապես Անդրանիկ զորավարին և նրա Հայկական առանձին հարվածող ջոկատին, ապա հանկարծակի հարձակումով գրավում Ալեքսանդրապոլը: 1918թ. մայիսի 15-ի «Կովկասի խոսք» թերթի թղթակցության մեջ նշվում է.«Թուրքիան հարձակվել է Ալեքսանդրապոլի վրա, ենթարկել գնդակոծության և գուցե և արդեն գրավել այն: Ինքնին հասկանալի է, որ թուրքերի հարձակումը մեր հրամատարության համար լիովին անսպասելի, ինչպես ձյուն թափվեց նրա գլխին, և այն ոչինչ չէր կարող անել քան ընդունել ճակատամարտը: Բայց պայմանները, որով ընդունվեց այն գրեթե հույս չէր թողնում նրա բարաեհաջող ելքի համար: Թուրքերի գործողությունները ոչ այլ ինչ էին քան ամենաարտասովոր պայմանագրի խախտում, այն պայմանագրի որ ձեռք էր բերվել այնպիսի թանկ գնով ինչպիսին Կարսն էր:

Եթե ուշադիր հետևենք թուրքերի բոլոր հաջողությունները արդյունք են ոչ այնքան ռազմական գործողությունների, որքան դիվանագիտական խարդավանքերի, միջազգային իրավունքի և զինադադարի պայմանների խախտման: Մեր կողմից թուրքերը ոչինչ բացի անընդհատ զիջումներից չեն տեսել: Մեր այդ վերաբերմունքը թուրքերի նկատմամբ պայմանավարված էր խաղաղության կրքոտ ցանկությամբ: Բայց մենք չստացանք ոչ մեկը ոչ մյուսը: Պատերազմը ներխուժեց մեր սահմանները և այնպիսի աներևակայելի արհավիրքներ բերեց որ մտածելիս մարդու արյունն է սառչում...»: [1]

Թուրքական խաղաղության օրակարգով պատերազմելու ռազմավարության կարևոր դրույթներից էր խաղաղության խոստումներով հայ հասարակությանը դիմադրական կարողությունից զրկելը: Հաստատվելով այս կամ այն վայրում թուրքերը դիմում են տեղի բնակչությանը, առաջարկում դիմավորել իրենց՝ խոստանալով ապահովել խաղաղություն և անվտանգություն: Նման ռազմավարությամբ հասարակությանը տրամադրում են կռվող ուժերի դեմ՝ չեզոքացնելով վերջիններիս ապահովում իրենց պահանջների կատարումը: Այս տեսակետից առանձնակի հետաքրքիր է Սմբատի նամակն ուղարկված Անդրանիկին.« Մեր զորքերը կանգնած են Համամլուի առաջ, Ջաջուռի լեռների հետևը: Սա մի դժբախտութիւն, միւս հետևեալն է: Երեկ երեկոյեան ժամը երեքին Համամլու է գալիս մի տաճիկ սպայ նամակով: Նամակի մէջ

[1] *Из истории иностранной интервенции в Армении в 1918г./Документы и материалы/, составитель Х. Бадалян, Ер. 1970, с . 117-119.*

նոր պահանջ են առաջարկում, բանալ Ջուլֆայի գիծը և անարգել կերպով թոյլ տալ իրենց զինուորներին երկաթուղով անցնել Ջուլֆայի գիծը: Համաձայնութեան դէպքում խօստանում են բոլոր միջոցները ձեռք առնել խաղաղ ժողովրդի կեանք ու գոյքը ապահովել, հակառակ դէպքում սպառնում են ոյժով բանալ ճանապարհը: Ժամանակամիջոց տրուած էր մի ժամ: Ի նկատի առնելով, որ այս րոպէիս մենք փաստացի զօրք չունենք, մնացել են թշուառ բեկորներ, պօլկ կայ, որ մնացել են 30 հոգի: Ի նկատի առնելով, որ մեր ժողովուրդը չի ցանկանում կռուել և սպառնում է կռիւ ցանկացողներին, որպէս իր դժբախտութեան պատճառների կոտորել, որ ռազմամթերք և պաշար ունենք 4 օրուայ, խորհրդակցելով Թիֆլիսի և Երևանի հետ, որոշեց պատասխանել, որ ընդունում ենք այդ պահանջները և միջոցներ ենք ձեռք առնում, որ տաճկական զօրքերը անարգել կերպով անցնեն Ջուլֆա: Իմ խորին համոզմունքով սա վերջին պահանջը չէ: Դէռ պահանջներ շատ է լինելու: Եվ վերջապէս պահանջելու են, որ Անդրկովկասը ճանաչի տաճկական գերիշխանութիւնը և դա էլ է ընդունելու: Այդ բոլոր պահանջները այն ձևով են տրուում, որ և պահանջներն են կատարուում և հայ ժողովուրդը թափառական և անդաստան է դառնում»: [1] Միան ռեալ ուժը, որին թուրքերը բախվեցին Սարդարապատում ստիպեց նրանց խաղաղության դաշն կնքել Բաթումում, որտեղ սակայն կրկին խաղարկելով խաղաղության խաղաքարտը հայերի ձեռքից խլեցին հաղթանակը: Հայաստանի անկախության հռչակումը և Բաթումի խաղաղության պայմանագրի կնքումը, սակայն նրանց հետ չպահեց գրավված տարածքներում, մասնավորապես Ալեքսանդրապոլի գավառում հայոց ցեղասպանությունը շարունակելու սևեռուն մտքից: Եվ միայն պատերազմի ավարտական փուլում, երբ ակնհայտ էր իրենց պարտությունը՝ նորից խոսում են խաղաղության մասին, չմոռանալով նյութեր հավաքել «խեղճ» մահմեդականների նկատմամբ հայերի գազանությունների վերաբերյալ: Ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայ գաղթականները և թուրքական անօրինակ գազանությունենրի զոհ գնացած արևելահայերը ստիպված են լինում թուրքական գազանությունների մասին վկայություններ հավաքելու և վեհաժողովին ներկայացնելու համար հանձնաժողով ստեղծել:[2]

1920թ. սեպտեմբեր-նոյեմբերին թուրքական արշավանքի ժամանակ թուրքերն հերթական անգամ գործարկում են խաղաղությամբ պատերազմելու ռազմավարությունը: Այս անգամ հանդես գալով

---

[1] *ՀԱԱ, ֆ. 370, ց.1, գ. 5 , թ. 7:*

[2] *ՀԱԱ, ֆ.221, ց. 1, գ. 31, թ. 37:* ***Ալեքսանյան Կ****, Ալեքսանդրապոլի գավառի բնակչության կորուստները թուրքական բռնազավթման շրջանում՝ 1918թ. մայիս-դեկտեմբերին, ՀՀ ԳԱԱ, ՇՀՀԿ, Գիտական աշխատություններ, հ. 23, Գյումրի, 2020, էջ 93:*

Հայաստանի խորհրդայնացման ջատագովների դերում, ապահովում են Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը, գրավում Ալեքսանդրապոլի գավառը՝ խաղաղության կողմնակից հայ բոլշևիկների հետ ստեղծում տեղական իշխանության մարմիներ՝ ձեռքի հետ իրականացնելով արևելահայության մի ստվար զանգվածի ցեղասպանութուն: Թեև Ալեքսանդրապոլի և Մոսկվայի եղբայրության խաղաղության պայմանագրերով Ալեքսանդրապոլի գավառը մնում էր Հայաստանին, խաղաղություն հաստատելու պատրվակով ամբողջ վեց ամիս թուրքական զորքերը չեն հեռանում այստեղից՝ մինչև որ խորհրդային հրամանատարությունը վերջնագրով չի ստիպում հեռանալ: Սակայն հեռանալուց հետո դեռ երկար ժամանակ շարունակում են թշնամական գործողությունները, մինչև որ Կարսի պայմանագրով ամրագրելով ռազմական և դիվանագիտական հաջողությունները չեն կորզում ամեն հնարավոր զիջում:

1918-1921թթ. թուրքական դիվանագիտության կողմից մշակված և գործարկված խաղաղության օրակարգով պատերազմելու ռազմավարությանը բնորոշ էին՝ հայերին իրենց ցանկացած խաղաղությունը պարտադրելը, կնքված պայմանագրերը չիրականացնելը, ամենավերջին հնարավոր տարածքը զավթելն ու հնարավորության սահմաններում թալանելը, միաժամանակ մեղադրելով հակառակ կողմին խաղաղություն տապալման մեջ, սպառնալ պատերազմով, կոտրել դիմադրական կորովը և վերջապես անհիմն հույսեր առաջացնելով խաղաղության կողմնակիցների մոտ՝ բթացնել զգոնությունը, պառակտել հասարակությունը նպաստավոր պայմաններ ստեղծել արևելահայոց ցեղասպանության իրականացման համար:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը: